Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 13-ի N 1542 -Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2007 թվականի
մարտի 1-ի N 348 -Ն որոշման

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՏԱՐԱԺԱՄԿԵՏՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան ____ հոկտեմբերի 2011 թ.

Ձորաղբյուր համայնքը (այսուհետ՝ պարտատեր), ի դեմս համայնքի ղեկավար Ա. Մուքայելյանի, մի կողմից, և «Վաշինգտոն Քեփիթալ Էսքրոու Ընդ Թրասթ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «պարտապան», ի դեմս տնօրեն Գևորգ Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն՝ պարտապանը պարտավորվում է իր նախաձեռնությամբ ՀՀ կառավարության __.__2011 թ. N ___ որոշմամբ նպատակային նշանակությունը փոխված հողամասերի կադաստրային արժեքների տարբերության՝ սույն պայմանագրի կնքման պահին չվճարված մասը, որը կազմում է _____ ՀՀ դրամ, վճարել տարաժամկետ վճարման կարգով ՀՀ կառավարության __.__2011 թ. N ___ որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ հետևյալ ժանկետներում.

- _____ դրամը՝ մինչև 31.12.2012 թ.՝ իր հայեցողությամբ որոշված մասնաբաժիններով,
- _____ դրամը՝ 01.01.2013-31.12.2013 թթ. ընթացքում՝ իր հայեցողությամբ որոշված մասնաբաժիններով,
- _____ դրամը՝ 01.01.2014-31.12.2014 թթ. ընթացքում՝ իր հայեցողությամբ որոշված մասնաբաժիններով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պարտատերն իրավունք ունի՝

1) պարտապանից պահանջելու վճարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված վճարները.

2) սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված վճարման ժամկետներից յուրաքանչյուրի 30 օրը գերազանցող խախտման դեպքում պահանջելու լուծել սույն պայմանագիրը, ինչի դեպքում հողամասերի կադաստրային արժեքի տարբերությունից պայմանագրի լուծման պահի դրությամբ պարտապանի կողմից կատարված վճարումները պարտապանին չեն վերադարձվում.

3) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2.2. Պարտատերը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները ստանալու դեպքում պարտապանին տրամադրել համապատասխան վճարումների կատարումը հավաստող ստացական (ստացականները).

2) չխոչընդոտել սույն պայմանագրով նախատեսված պարտապանի իրավունքի իրականացմանը:

2.3. Պարտապանն իրավունք ունի՝

1) պարտատիրոջից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները.

2) պարտատիրոջից պահանջելու տրամադրել համապատասխան վճարումների կատարումը հավաստող ստացականը (ստացականները).

3) օգտվելու ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված այլ իրավունքներից:

2.4. Պարտապանը պարտավոր է՝

1) սույն պայմանագրով սահմանված կարգով վճարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները:

3. Պայմանագրի գործողության ժամկետը և դրա դադարումը

3.1. Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է ------- ---------- ---- թ.-ից մինչև -------- ---------- ------- թ. և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2. Սույն պայմանագիրը դադարում է՝

1) պայմանագրի կատարմամբ.

2) սույն պայմանգրի 3.1-ին կետում նշված պայմանգրի ժամկետը լրանալու դեպքում.

3) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

4) պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պայմանագրի վաղաժամկետ լուծելու դեպքում.

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրվելու պահից:

5.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերենով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.3. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի համաձայնությամբ: Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն կողմերի կողմից:

5.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություններ ձեռք չբերվելու դեպքում՝ վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6. Կողմերի գտնվելու վայրը և ստորագրությունները

Պարտատեր	**Պարտապան**
Ջորաղբյուր համայնք	*«Վաշինգտոն Քեփիթլ Էքրոու Ընդ Թրաստ»*
Կուրայքի մարզ, գյուղ Ջորաղբյուր	*ՓԲԸ*
	ք. Երևան, Մ. Խորենացու 4-2
Համայնքի ղեկավար Ա. Մուքայելյան	*Տնօրեն Գ. Հովսեփյան*
(ստորագրությունը)	*(ստորագրությունը)*
Կ.Տ	*Կ.Տ*

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ